ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 26—27-ը տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։ Բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա նշեց, որ անցած տարի հայրենական գիտությունը հսկայական հաջողությունների հասավ, որոնք հիացրին աշխարհը։

— Ամենից առաջ,— ասաց նա,— պետք է նշել տիեզերականի իջեցումը Վեներա մոլորակի վրա, մի փորձ, որը հարուստ տեղեկություններ տվեց հարևան մոլորակի մթնոլորտի կառուցվածքի մասին և միաժամանակ տեխնիկական մեծ նվաճում հանդիսացավ։ Բացառիկ հաջողություն ունեցան երկրի սովետական փորձնական օդերևույթաբանական արբանյակների աշխատանքները։ Դրանք ապացուցեցին, որ մի քանի այդպիսի ավտոմատ կայանների օգնությամբ կարելի է ստանալ այնպիսի ինֆորմացիա, որն իր ծավալով և որակով չի զիջում մոլորակի մակերևույթի վրա գործող տասնյակ հազարավոր օդերևույթաբանական կայանների հաղորդած տեղեկություններին։

Այնուհետև ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը կանգ առավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնարկների աշխատանքի արդյունքների վրա։ Նա նշեց, որ ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ժամանակաշրջանում ևս կարևոր արդյունքներ են ձեռք բերվել մաթեմատիկայի ու մեխանիկայի, աստրոֆիզիկայի և ֆիզիկայի, քիմիայի ու կենսաբանության, երկրի մասին գիտությունների, հասարակական գիտությունների և այլ բնագավառներում։ Մասնավորապես բարձր գնահատական տրվեց Բյուրականի Լենինի շքանշանակիր աստղադիտարանում, մաթեմատիկայի ու մեխանիկայի, բիոքիմիայի, օրգանական քիմիայի, երկրաբանական գիտությունների, բուսաբանության, միկրոբիոլոգիայի և մի շարք այլ ինստիտուտներում կատարված հետազոտություններին։

Խոսելով գիտական կապերի մասին, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը մեծ նշանակություն տվեց Սովետական Միության եղբայրական հանրապետությունների հետազոտական կենտրոնների հետ ունեցած Հայաստանի գիտնականների կապերին։ Դրա փայլուն օրինակն են հանդիսանում գեոֆիզիկայի ու ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի և Տաջիկստանի գիտությունների ակադեմիայի, Բյուրականի աստղադիտարանի և Լենինգրադի համալսարանի ու Վրաստանի, Ադրբեջանի աստղադիտարանների, Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի և Մոսկվայի գիտական հիմնարկների կոնտակտների արդյունքները։ Այդ համագործակցությունը անհրաժեշտ է ամրապնդել նաև այսուհետև։

Ընդլայնվել են նաև հանրապետության գիտնականների միջազգային կապերը։ Այսպես, Հունգարիայի և Բուլգարիայի գիտությունների ակադեմիաների ղեկավարները ցանկություն են հայտնել առավել սերտ համագործակցություն հաստատել մեր ինստիտուտների հետ։

Անդրադառնալով գիտական հետազոտությունների արդյունքներն արմատավորելու հարցին, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը ընդգծեց մի շարք փորձնական արտադրություններ ստեղծելու, մինիստրությունների և առանձին ձեռնարկությունների հետ գիտական հիմնարկների համագործակցություն հաստատելու անհրաժեշտությունը։

Գիտնականների տարեկան հաշվետու ժողովում «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1967 թվականի գործունեության հիմնական արդյունքների մասին» զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Գ. Դավթյանը։

Հանրապետության ակադեմիայի գործունեության տարեկան հաշվետվության շուրջը բացվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոսներ Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ա. Բ. Նալբանդյանը, Ա. Ս. Ղարիբյանը, Ա. Ա. Առաքելյանը, պատմական գիտությունների դոկտորներ Ա. Ն. Մնացականյանը, Գ. Ա. Գալոյանը և Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալ Ա. Սիմոնյանը։

Ակադեմիայի փոխպրեզիդենտ Ա. Ռ. Հովհաննիսյանը իր ելույթում կանգ առավ կոմունիստական հասարակարգի կառուցման ժամանակաշրջանում հասարակական գիտությունների կարևոր դերի վրա։ Նա ասաց, որ մշակվեցին մի շարք միջոցառումներ, որոնք հնարավորություն ստեղծեցին ընդլայնելու և խորացնելու հետազոտությունները գիտությունների այդ բնագավառում։ Սակայն գիտությունների ակադեմիան պետք է հոդ տանի հասարակական գիտությունների զարգացման գիտատեխնիկական բազայի մասին։ Անցյալ տարվա նոյեմբերին հատկացվեցին մեծ միջոցներ, որոնք հումանիտար ինստիտուտներին թույլ կտան ձեռք բերել հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ ապարատներ ու տեխնիկա։ Արդեն սկսվել է մի շարք լաբորատորիաների և խմբերի կազմակերպումը, բայց այդ ուղղությամբ անհրաժեշտ է աշխատանքները ընդլայնել և արագացնել։

Ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը իր ելույթում նշեց, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել Հին Արևելքի պատմության, դասական լեզուների, կովկասագիտության, պատմական ժանդակ առարկաների մասնագետներ պատրաստելու հարցերին։

Քիմիական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ա. Նալբանդյանը իր ելույթում կանգ առավ հետազոտական հիմնարկների համար շենքեր կառուցելու հարցի վրա։ Նա քննադատական խոսք ասաց շինարարների հասցեին, որոնք ձգձգում և վիժեցնում են օրգանական քիմիայի, բիոքիմիայի, նորը օրգանական քիմիայի ինստիտուտների համար նոր շենքեր կառուցելու ժամկետները։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ղարիբյանը իր ելույթում կանգ առավ հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների գիտական աշխատողների և մյուս հանրապետությունների հասարակագետների հետ ունեցած ստեղծագործական համագործակցության ընդլայնման վրա։

Ակադեմիկոս Ա. Առաքելյանը իր ելույթը նվիրեց տնտեսագիտական մի շարք կարևոր պրոբլեմների ներդրման հարցին։ Նա ասաց, որ տնտեսագիտության ինստիտուտը սկսել է հետազոտել 1966—1985 թվականներին հանրապետությունում վերարտադրությունն ընդլայնելու և ճյուղային ստրուկտուրան փոփոխելու պրոբլեմներ, որոնց նպատակն է՝ ուղիներ գտնել ավելի ռացիոնալ, արդյունավետ օգտագործելու աշխատանքային ռեսուրսները, արտադրական ապարատը։

Տարեկան ընդհանուր ժողովում գիտնականները լսեցին ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանի «Մ. Գորկին և հայ մշակույթը» և տեխնիկական գիտությունների դոկտոր Ա. Մ. Գասպարյանի «Երկթաղ հոսքի հիդրոդինամիկայի մի քանի հարցեր» զեկուցումները։

Ընդհանուր ժողովում տեղի ունեցան Հայաստանի գիտությունների ակադեմիայի նոր ակադեմիկոսների, թղթակից-անդամների և նախագահության անդամների մասնակի ընտրություններ։

ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամներ ընտրվեցին Բ. Բ. Պիոտրովսկին (հնագիտություն)—պետական Էրմիտաժի դիրեկտոր, Ե. Պ. Ադայանը (ՍՄԿԿ պատմություն)—ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտոր, Ա. Թ. Բարայանը (քիմիա)— ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ ընտրվեցին Բ. Ն. Առաքելյանը (հնագիտություն)— հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, Գ. Բ. Ջահուկյանը (լեզվաբանություն)— Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի դիրեկտոր, Հ. Հ. Վարդապետյանը (միջուկային ֆիզիկա և տարրական մասնիկների ֆիզիկա)— Երևանի ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, Յու. Ֆ. Օսլովը (միջուկային ֆիզիկա և տարրական մասնիկների ֆիզիկա)— Երևանի ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, Ա. Մ. Գասպարյանը (քիմիական տեխնոլոգիա)— Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր և ամբիոնի վարիչ, Գ. Տ. Թադևոսյանը (քիմիա)—ակադեմիայի նորը օրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, Վ. Գ. Մխիթարյանը (կենդանիների բիոքիմիա)— Երևանի պետական բժշկական ինստիտուտի ամբիոնի վարիչ, Ս. Ա. Բակունցը (կենդանիների ֆիզիոլոգիա)—ակադեմիայի Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի դիրեկտոր։

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ, գիտությունների ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան անցկացվեցին ընտրություններ։ Հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ վերընտրվեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

ՀՍՍՀ ԳԱ նախագահության անդամ և ֆիզիկա-տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ակադեմիկոս Մ. Մ. Ջրբաշյանը։

Նախագահության անդամ և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ակադեմիկոս Ծ. Պ. Ադայանը։

ՀՍՍՀ ԳԱ նախագահության անդամ ընտրվեց ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։

Ընդհանուր ժողովին ներկա էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿԿ Երքազկոմի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լ. Ստեփանյանը։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 25-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1967 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանը։

Բաժանմունքի գործունեությունը հաշվետու տարում բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով։

Տնտեսագիտության ինստիտուտի աշխատանքները հաշվետու տարում ընթացել են հանրապետությունում սոցիալիստական արտադրության արդյունավետության բարձրացման տեսական ու գործնական պրոբլեմների հետազոտման ուղղությամբ։ Այդ պրոբլեմներից են՝ արտադրության կառուցվածքի առաջադիմական տեղաշարժերը, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության բարձրացումը, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, արտադրության նյութական խթանման հարցերը։

Ինստիտուտի գիտական աշխատողների կողմից հաշվետու տարում մշակվել են այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են՝ «ՀՍՍՀ բնակչությունը և նրա աշխատանքային ռեսուրսները 1971—1985 թվականներին», «Ձեռնարկությունների վերակառուցման և ընդլայնման արդյունավետությունը», «Ոչ հանքային նյութերի կոմպլեքսային օգտագործման արդյունավետությունը», «ՀՍՍՀ արդյունաբերության հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը» թեմայի գծով մշակվել է արդյունաբերության առանձին ճյուղերի և ձեռնարկությունների օպտիմալ արտադրական ծրագրի որոշման մեթոդիկա։ 1967 թ. ավարտվել է «Հայ սոցիալ-տնտեսագիտական մտքի զարգացումը IX—XIV դարերում» աշխատությունը։

Հաշվետու տարում պատմության ինստիտուտի գիտական կոլեկտիվի ուշադրությունը նվիրված է եղել սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմության, կապիտալիստական հասարակարգի, ֆեոդալական հասարակարգի ծագման ու պատմության, Հայաստանում ստրկատիրական հասարակարգի պատմության, հայ դաղթավայրերի, հայ պարբերական մամուլի պատմության պրոբլեմների հետազոտմանը, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի հրատարակմանը։

Ավարտված են «Ուրվագծեր XIX դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական հոսանքների և հայ ազգային բուրժուական կուսակցությունների պատմության», «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» (1-ին մաս, 1890—1904 թթ.), «Ազգային-ազատագրական շարժումը Վասպուրականում 1880—1908 թթ. և արմենականները» մենագրությունները, «Հայկական մատենագրության» Բ հատորի, «Հայաստանը օսմանյանների ժամանակաշրջանում», «Բյուզանդական աղբյուրները (Կոստանդին Ծիրանածին) Հայաստանի և հայերի մասին» աշխատությունները։ Հայ դաղթավայրերի պատմության բաժնում ավարտված են Ղրիմում (XVIII դարի վերջ, XX դարի սկիզբ) և Բուլղարիայում XIX դարում հայ գաղութների պատմությանը նվիրված, իսկ հայ պարբերական մամուլի պատմության պրոբլեմի գծով՝ Հայկական պարբերական մամուլը սոցիալիզմի հաղթանակի համար մղած պայքարում (1920—1940 թթ.) և Հայկական պարբերական մամուլը 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին թեմաները։

Անդրադառնալով հնագիտության և ազգագրության ինստիտուտի գործունեությանը, ակադեմիկոս Ա. Ղարիբյանը նշեց, որ ինստիտուտի գիտական կոլեկտիվը հաշվետու տարում շարունակել է հետազոտական աշխատանքներ կատարել հետևյալ երեք պրոբլեմների ուղղությամբ՝ Հայաստանի հնագիտական ուսումնասիրություն, Հայաստանի ազգագրական ուսումնասիրություն և հայկական բանահյուսություն։ Այդ պրոբլեմների գծով 1967 թ. ինստիտուտում մշակվել է 38 թեմա, որից ավարտված են 13-ը։

Հաշվետու տարում ինստիտուտը ավարտել է գիտական հետաքրքրություն ներկայացնող մի շարք աշխատանքներ, այդ թվում՝ «Հայաստանի անտիկ շրջանի հուշարձանները», «Հայաստանի քաղաքները V—XV դարերում», «Թեղուտի երկրագործական մշակույթը IV—III հազարամյակում մ. թ. ա.» և այլն։ 1967 թ. գործել են Լճաշենի, Մեծամորի, Կարմիր բլուրի, Արինբերդի, Նոր Արմավիրի, Գառնիի, Հին Արմավիրի, Դվինի հնագիտական, ազգագրական-բանահյուսական և վիմագրական արշավախմբերը, որոնք հավաքել են արժեքավոր շատ նյութեր։

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական կոլեկտիվի հետազոտական աշխատանքները տարվել են հետևյալ ուղղությամբ. սովետական գրականության զարգացման օրինաչափությունները արդի փուլում, Մարքս-Լենինյան գրականագիտություն, պոետիկա, նոր հայկական գրականություն, հայ գրականություն, հայ գրականության կլասիկների երկերի հրատարակում և գրական կապեր։

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հետազոտական աշխատանքներ է կատարել նվիրված հայերենի զարգացման օրինաչափություններին՝ կապված հայկական սոցիալիստական ազգի զարգացման հետ, բառարանագիտության և բառագիտության, հայոց լեզվի պատմության, հայկական բարբառների ուսումնասիրության պրոբլեմների ուղղությամբ։

Զեկուցողը վերլուծելով արվեստի ինստիտուտի կատարած աշխատանքները, նշեց, որ հայ արվեստագետների ուսումնասիրությունները նվիրված են եղել երաժշտության, ճարտարապետության, թատրոնի, կինոյի, կերպարվեստի և կիրառական արվեստի, շեքսպիրագիտության և մշակութային կապերի պրոբլեմներին։

Անդրադառնալով արևելագիտության, փիլիսոփայության և իրավունքի սեկտորների գործունեությանը, ակադեմիկոս Ա. Ղարիբյանը նշեց, որ արևելագիտության սեկտորի գիտահետազոտական աշխատանքի հիմնական ուղղությունը եղել է Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրումը, ներքին և արտաքին քաղաքականության հարցերը, միջպետական հարաբերությունները այդ երկրների միջև, զարգացող երկրների տնտեսական պրոբլեմները, գաղափարական հոսանքները և ազգային հարցը Մերձավոր և Միջին արևելքի երկրներում, Օսմանյան կայսրության պատմությունը XIX դարի և XX դարի ժամանակակից Թուրքիայում և այլ հարցերը։

Փիլիսոփայության և իրավունքի սեկտորը հաշվետու տարում ավարտել է հետևյալ թեմաները. «Գիտակցական սկզբունքի դերը կոմունիստական հասարակական հարաբերությունների կազմավորման պրոցեսում», «Վահրամ Ռաբունու փիլիսոփայությունը», «Սոցիալիզմի զարգացման դիալեկտիկան», «Նահապետ Ռուսինյանի փիլիսոփայական և հասարակական-քաղաքական հայացքները», «Հայկական պետության տնտեսական-կազմակերպական գործունեության հիմնական պրոբլեմները արդի փուլում» և այլն։

Ժողովում ելույթներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը, ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Կ. Ջալոյանը, գրականության ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Ս. Նալբանդյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը, տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ Շ. Մարդարյանը։

Գրեթե բոլոր ելույթ ունեցողները արդարացիորեն քննադատեցին հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյին և նրա ղեկավարությանը գիտական հիմնարկների հետ անբավարար կապ պահպանելու, հայագիտության կարևորագույն պրոբլեմները գիտական շրջանառության մեջ դնելու համար գիտահետազոտական ինստիտուտներին անհրաժեշտ օգնություն ու ղեկավարություն ցույց չտալու, հանրապետության մյուս հասարակական գիտությունների հիմնարկների հետ անբավարար կապ պահպանելու համար։

— Հաշվետու տարում,— իր ելույթում ասաց ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը,— մեր գիտական հիմնարկները չեն զգացել հասարակական գիտությունների բաժանմունքի ղեկավարությունը։ Բաժանմունքի հիմնական հարցերից մեկը հայագիտությունն է, սակայն այս բնագավառում ունենք շատ թերություններ։ Անհրաժեշտ է մոբիլիզացնել համապատասխան գիտական ինստիտուտներին՝ հնագիտական, ազգագրական, բանահյուսական հարուստ նյութեր հավաքելու և գիտական շրջանառության մեջ դնելու համար։

Ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը խոսելով բաժանմունքի անբավարար գործունեության մասին, նշեց, որ գիտական կարևոր հարցեր չեն քննարկվել բաժանմունքի բյուրոյում, բաժանմունքը սերտ կապի մեջ չէ Երևանի համալսարանի հետ։

Խոսելով հայագիտական շատ հարցերի թերի լուսաբանման մասին, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Կ. Զալոյանը իր ելույթում նշեց, որ Մոսկվայում և արտասահմանում հայագիտության վերաբերյալ հրատարակվում են աշխատություններ, որտեղ սխալ են մեկնաբանվում հայագիտության հարցերը, բայց մենք անհրաժեշտ վերաբերմունք չենք ցույց տալիս դրանց նկատմամբ, հաճախ որոշ ոչ ճշմարիտ մեկնաբանված հարցեր մնում են առանց գիտական վերլուծման։

— Ակադեմիայի ինստիտուտները ըստ կատեգորիաների բաժանելը,— իր ելույթում ասաց գրականության ինստիտուտի դիրեկտոր Վ. Նալբանդյանը,— արդարացի դժգոհություն է առաջացնում գիտական աշխատողների մեջ։ Ժամանակն է վերջ տալ ոչնչով չարդարացված այդ բաժանմանը և հավասար պայմաններ ստեղծել բոլոր գիտական հիմնարկների համար։

Ա. ՍԱՂԱՂՅԱՆ